**ԻՄ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԱՄԻՍ 2017**

# ԼՈՒՍԱՆԿԱՐՉԱԿԱՆ ՄՐՑՈՒՅԹ

**21-րդ դարում անվտանգ վզալու համար մեվնից պահանջվում է լինել վգոն, չբացահայտել անձնական բնույթի տեղեկատվություն անվստահելի մարդկանց, կազմակերպություններին և այլն. Նիգերիայից Ձեր «նորահայտ պապիկը» ցանկանում է Ձեզ ժառանգություն ուղարկել, և նրան պետք են Ձեր բանկային քարտի տվյալները, իսկ միգուցե Դուք հենց նոր մեծ գումա՞ր շահեցիք բրիտանական լոտոյով ... պետք չէ միամիտ լինել. պահպանե՛ք Ձեր տեղեկատվության անվտանգությունը:**

## Պայմանները

- մրցույթին մասնակցությունն ԱՆՎՃԱՐ է,
- լուսանկարները պետք է լինեն Ձեր հեղինակային աշխատանքները, այլ ոչ կրկնօրինակված կամ համացանցից բեռնված,
- լուսանկարների հեղինակային իրավունքը փոխանցվում է ՀՀ կենտրոնական բանկին՝ դիմում-հայտում նշված համաձայնությամբ: Լուսանկարները կարող են օգտագործվել էլեկտրոնային կամ տպագիր տարբերակով՝ կրթական, տեղեկատվական բնույթի նյութերում, ցուցադրվել տարբեր միջոցառումների ժամանակ,
- լուսանկարները պետք է լինեն ուսումնական, դաստիարակչական բնույթի և չպետք է կրեն քաղաքական, խտրական (ռասայական, տարիքային, սեռական, էթնիկական, կրոնական և այլ) բնույթ,
- լուսանկարներում չպետք է լինեն գովազդային տարրեր,
- յուրաքանչյուր լուսանկար պետք է լինի առնվազն 2000x1333 pixels, .jpg կամ .png ձևաչափերով,
- լուսանկարներին պետք է կցել համառոտ նկարագիր (որտե՞ղ և ե՞րբ է լուսանկարվել, կարճ բնութագիր),
- լուսանկարների վրա պետք չէ նշել հեղինակի անունը կամ կատարել ինքնությունը բացահայտող այլ գրառումներ:

## Ե՞րբ կհայտարարվեն արդյունքները

Հաղթողների անունները կհրապարակվեն, և մրցանակները կհանձնվեն մայիսին՝ «Իմ ֆինանսների ամիս 2017» ծրագրի փակման արարողության ժամանակ: Արդյունքների մասին կարող եք տեղեկանալ նաև **www.abcfinance.am** կայքից:

## Թեմա

ՀՀ կենտրոնական բանկը **«Իմ ֆինանսների ամիս 2017»** ծրագրի շրջանակում սիրով հրավիրում է մասնակցելու լուսանկարչական մրցույթի՝ **«Անվճար պանիրը՝ միայն թակարդում»** խորագրով:
Անհրաժեշտ է լուսանկարչության լեզվով անդրադառնալ ֆինանսական խարդախությունների և պեղծարարությունների տարբեր եղանակներին (վճարային քարտով, բանկոմատով, էլ. նամակով, հեռախոսազանգով և այլն): Մրցույթի նպատակն է խթանել ֆինանսական գործիքներից ճիշտ և անվտանգ օգտվելը՝ խարդախությունների վոհ չդառնալու համար:

### Ու՞մ համար

Մրցույթին մասնակցելու համար **տարիքային սահմանափակում չկա**:

### Ե՞րբ

Աշխատանքները կընդունվեն **2017 թվականի մարտի 10-ից մայիսի 8-ը**:

### Ինչպե՞ս մասնակցել

**Քայլ 1.**
Մասնակցության համար **www.abcfinance.am** կայքի «Իմ ֆինանսների ամիս 2017» **Լուսանկարների մրցույթ** բաժնից անհրաժեշտ է բեռնել **ԴԻՄՈՒՄ-ՀԱՅՏԸ**, ծանոթանալ դրույթներին, լրացնել ու կցել լուսանկարչական պատմությանը:

**Քայլ 2.**
Ներկայացնել ԼՈՒՍԱՆԿԱՐՉԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ և ԴԻՄՈՒՄ-ՀԱՅՏԸ ՀՀ կենտրոնական բանկ հետևյալ տարբերակներից մեկով՝
- Ուղարկել **consumerinfo@cba.am** էլ. հասցեով՝ նամակի վերնագիրը նշելով **ԼՈՒՍԱՆԿԱՐՉԱԿԱՆ ՄՐՑՈՒՅԹ**,
- Բերել ՀՀ կենտրոնական բանկ CD/DVD սկավառակով. աշխատանքային օրերին, ժամը 9:00-ից 18:00-ը՝ նախապես պանգահարելով **010 592 715** հեռախոսահամարով:

### Մրցանակներ

Ժյուրին կընտրի 3 լուսանկարներ, որոնք կարժանանան մրցանակների՝
**1-ին տեղ՝ 100 000 դրամ,**
**2-րդ տեղ՝ 75 000 դրամ,**
**3-րդ տեղ՝ 50 000 դրամ:**
Լավագույն լուսանկարները կտեղադրվեն www.abcfinance.am կայքում, սոցիալական կայքերի (Facebook, Twitter) համանուն էջերում:
Կարող են լինել նաև հատուկ մրցանակներ բանկերի, ապահովագրական ընկերությունների, վարկային կազմակերպությունների և այլ ֆինանսական կառույցների կողմից:

## Ու՞ր դիմել հարցերի դեպքում

consumerinfo@cba.am
+37410592697
@abcfinance_CBA
ABCFinance.am
www.abcfinance.am
#MFM2017

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

abcfinance.am
ԱՅԲ ԲԵՆ ԳԻՄ ՖԻՆԱՆՍՆԵՐ